փարի ու զգացմունքի համապատասխան արտայայտութիւններ են դարձել. իսկ այդ արտայայտութեան մէջ փոքրիկ փոփոխութիւն անգամ իրրև խորթութիւն և սրբապղծութիւն է նկատւում։ Արուած լինի այդ փոփոխութիւնը ներսէս պատրիարքից, որ առաջին և եթէ չեմ սխալւում միայն մի անգամ թոյլ է տուել իրան այդ անել, թէ մի այլ ոքից։

Եկեղեցու լրութիւնը անհամեմատ բարձր է և հեղինակաւոր քան որև է անհատ, լինի նա ներսէս պատրիարք Վարժապետեան թէ այլ ոք նրան հետևող։

Յուսիկ Եպիսկոպոս

ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ՄԱՅՐ ԱԹՈՌ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ՎԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏԻ Ի ՏՓԽԻՍ ԵՒ ՎԵՐԱԴԱՐՁԸ.

Փետրուար 2-ին ըստ նախընթաց կարգադրութեան, նորին ս. Օծութիւն Վեհ. Հայրապետը առաւօտեան ժամը 10-ին տալով իւր հրաժեշտը միաբանից, նոր թանգարանի դռանը նստեց կառքը և ուղևորուեց դէպի երկաթուղու կայարան (Կարխուն)։ Վեհ. Հայրապետին ճանապարհ դնելու ընկերացել էին Սինոդի անդամներից դեր. Տ. Յուսիկ եպս., Տ. Բագրատ վարդապետ, Տ. Աշոտ և Տ. Մխիթար վարդապետները, Մայր Տաճարի աւագ լուսարարապետ դեր. Տ. Ղևոնդ եպս., Հոգևոր ճեմարանի Տեսուչ Տ. Կարապետ և նորա օգնական Տ. Յուսիկ վրդ., նոյնպէս և Տպարանի Տե-

սուչ Տ. Ենիկ վարդապետ, Վաղարշապատի քհնք. և այլ ուղեկիցներ։ Ժամը 11-ին եկաւ գնացքը և կանգ առաւ Իգդիրի ճանապարհի վրայ կայարանից դուրս, ընդունելու ազգիս Հոգևոր պետին։ Նորին սրբութիւնը գնացքը նստելուց առաջ միանգամ ևս օրհնեց Իրեն ողջերթ մաղթողներին և բարձրացաւ իւր համար յատուկ ուղարկուած սալոն-վագոնը։ Նորին Սրբութեան դիմաւորելու և մինչև Էջմիածնի սահման ուղեկցելու եկած էր Զորրորդ գաւառամասի ոստիկանապետը իւր շքջանի տանուտէրներով և ձիաւորներով։

Նոյն երեկոյեան ժամը 7-ին Ալէքսանդրապոլ հասաւ։ Նորին Սրբութիւնը բարեհաճեց չորս օր հանգստանալ Ալէքսանդրապոլում և մի քանի գործերի առտեղեան էլ վախճան տալ։

Փետր. 7-ին ցերեկուայ գնացքով դուրս գալով Ալէքսանդրապոլից երեկոյեան ժամը 8-ին Տփխիս հասաւ։ Մինչև Ղարաքիլիսայ դիմաւորելու եկել էին Սանահնի գեր. վանահայր Գարեգին եպս. Սաթունեան և Տփխիսու Կոնսիստորիայի նախագահ Տ. Գարեգին վրդ. Յովսէփեան։ Վեհ. Հայրապետին ուղեկցում էին Մայր Աթոռից իւր դիւանապետ Կորիւն և Մատթէոսեան Մատթէոս վարդապետները, Ալէքսանդրապոլից մինչև Տփխիս միացաւ նաև տեղական յաջորդ Տ. Տիրայր վարդապետ։ Տփխիսի կայարանում Նորին սրբութեան դիմաւորեցին տեղական վարդապետները, քահանայք, Ներսէսեան դպրանոցի Հոգաբարձուք և այլ պատուաւոր ազգայինք։ Եղանակը անձրևային լինելու պատճառաւ Նորին Սրբութիւնը առանց եկեղեցի մտնելու ուղղակի առաջնորդարան բարձրացաւ։ սանդուղի ներքև սպասում էին քահանայք շուրջառներով, Ներսիսեան դպրանոցի խումբը երգում էր «Հրաշափառ Աստուած» շարականը։ Նորին Սրբութիւնը ըստ իւր սովորութեան սանդուխի գլխից օրհնելով և խաչակնքելով ներկայից՝ մտաւ Առաջնորդարան։

Մի քանի օր հանգստանալուց ղկնի Փետր. 16-ին այցելեց Վրաստանի էքզարխ բարձր Սրբազան Ալէքսէին, որ տեղ երկու հոգևոր պետերը շատ սիրալիր կերպով իրար հան-

դիպեցին և երկար տեսակցութիւն ունեցան։ Նոյն այցելութեան ուղեկցում էին Վեհ. Հայրապետին Գեր. Տ. Գարեգին եպս., Տիրայր, Կորիւն, Մատթէոս և Գարեգին վարդապետները և Տ. Ղևոնդ Խարազեան և Տ. Գիւտ Աղանեան Աւագ Քահանաները։ Նորին բարձր սրբազնութիւն էքզարխոսը մատոյց Նորին Սրբութեան վեհ. Հայրապետին Մցխէթի վանքի և նորա շրջակայից պատմական պատկերազարդ գիրքը։ Նոյն օր ժամը 2-ին փոխ այցելութեան եկաւ Վեհ. Հայրապետին ս. էքզարխոսը ընկերակցութեամբ Գօրւայ փոխանորդ Տ. Կիրիոն եպիսկոպոսի. Վեհից բաժանուելուց յետոյ Նորին բարձր սրբազնութիւն իջաւ վանքի եկեղեցւոյ բակը և դիտեց Կովկասեան վերջին հայազգի զօրապետաց գերեզմանը և օրհնելով նոցա յիշատակը մտաւ վանքի եկեղեցին և երկար մանրամասն դիտեց ներքին նորոգութիւնը և պատկերները։ Ցանկութիւն յայտնեց տեսնել Հայրապետական պատարագի զգեստները և ցոյց տրուեցաւ բացատրելով իւրաքանչիւրի նշանակութիւնը և կրելու եղանակը. ապա համբուրելով ս. Խաչը և Աւետարան Նորին բարձր սրբազնութիւն մեկնեց Առաջնորդարանից, ընդունելով իւր մատուցած յիշատակի փոխարէն Վեհ. Հայրապետից ս. Էջմիածնի և շրջակայ վանքերից լուսանկար ալբոմը։

Փետր. 19-ին Նորին Սրբութիւն այցելեց Կովկասի Տ. կառավարչապետ Իշխան Գալիցինին, որ տեղ մնաց մօտ մի ժամ. ուղեկցում էին Կորիւն և Գարեգին վարդապետները։ Նորին պայծառափայլութիւնը փոխադարձ այցելեց Վեհ. Հայրապետին Փետր. 20-ին, ուղեկցութեամբ իւր գլխաւոր թիկնապահ Իշխան Գուրիէլեանի։

Բարեկենդանի վերջին շաբթուն ս. Ղևոնդեանց տօնը առանձին շքով կատարուեց, Նորին Սրբութեան նախագահութեամբ և ամբողջ հոգևորականաց ներկայութեամբ ճաշուայ պատարագով. պատարագից յետոյ քահանայից ընդունելութիւն եղաւ Առաջնորդարանում, որտեղ Վեհ. Հայրապետը բացատրեց օրուայ տօնի նշանակութիւնը և տօնեցեալ սրբոց կենսագրութիւնը և կատարած դերը մեր եկեղեցական և ազգային ասպարիզում. ապա կարդաց առանձին իմն ոգևորու-

թեամբ իւր երգած գեղեցիկ ողբերգութիւնը ձօնուած ս. Ղեւոնդեանց յիշատակին։ Մէջ ընդ մէջ երգում էին դպիրները «Ցաւերժ կեցցեն յիշատակք Ձեր, ո՜վ սուրբք Ղեւոնդեանք»։

Հինգշաբթի Փետր. 21-ին ս. Վարդանանց ծննախմբութեան օրը, ճաշուայ պատարագին ներկայ եղաւ Նորին Սրբութիւնը և պատարագից յետոյ համառօտ կերպով խօսեց սեղանից օրուայ սրբոց մասին և կարդաց իւր գրած ողբերգութիւնը ի յիշատակ Վարդանանց և նորա քաջ նիզակակցաց. խումբը երգում էր դարձեալ «Ցաւերժ կեցցեն յիշատակք Ձեր, ո՜վ սուրբք նահատակք»։ Պատարագից յետոյ կատարուեց հոգեհանգստեան կարգը ի յիշատակ հայ ազգի համայն նահատակաց և ննջեցելոց։ Հոգեհանգստէն վերջը Նորին Սրբութիւնը եկեղեցական շքախմբով և հանդէսով բարձրացաւ պ. Աւետիք Բ. Ղուկասեանցի շինած նոր կրօնա—պատմական եկեղեցական թանգարանը և կատարեց նոյն հաստատութեան բացման հանդէսը՝ հաստատելով նոյնպէս նորա կանոնադրութիւնը իւր Հայրապետական կոնդակաւ։

Նոյն օրը իւր շքախմբով և Տփխիսում գտնուած կուսակրօններով այցելեց պ. Ղուկասեանին՝ որտեղ և ճաշեց։

Բուն բարեկենդանի կիրակի օրը Փետր. 24-ին եկեղեցի իջաւ պատարագին և գեղեցիկ դամբանականով դրուատեց հանգուցեալ Աղէքսանդր Երիցեանի կեանքը և գործունէութիւնը գրական ասպարէզում, ցաւ յայտնելով միաժամանակ որ չունինք նորան յաջորդող, և թէ հայ գրագէտի և գրական գործիչների դրութիւնը անապահով է։ Այդ դամբանականի մէջ առանձին ինն օրհնութեամբ յիշեց պ. Ա. Մանթաշեանի ձեռնտուութիւնը և օժանդակութիւնը հանգուցեալ Երիցեանին՝ որին բոլորովին նիւթական հոգսերից ապահովելով՝ միջոց էր տուել հանգուցելոյն զբաղուելու զուտ գրական գործերով։

Նորին Սրբութիւն թէպէտ և մտադիր էր երկար ժամանակ Տփխիս մնալ, սակայն Մայր Աթոռի մի քանի անյետաձգելի գործերի պատճառաւ՝ որտեղ իւր ներկայութիւնն անհրաժեշտ էր, ստիպուեցաւ Մարտ 7-ին թողնել Տփխիսը և մեկնել դէպի Աղէքսանդրապոլ, ուր տեղ մի օր հանգստա-

նալով Մարտի 10-ին կիրակի երեկոյեան ողջ առողջ ժամանեց իւր Աթոռը։

Նորին Սրբութեան կարդադրութեամբ Տ. Մատթէոս վարդապետ պահոց առաջին շաբթին մեկնեց Ախալցխայ իբրև քարոզիչ և հանդիսակատար Ջատկական տօներին։

Նորին Սրբութեան բարեհաճ թոյլատրութեամբ Տփխիս ժամանեցին գեր. Տ. Բարդուղիմէոս եպս., Սինօդի անդամ Տ. Բագրատ վարդապետ և Տպարանի Տեսուչ Տ. Եղնիկ վարդապետ։

Տփխիսում Նորին Սրբութեան ղեկուցում տալու եկան Շամախուց Տ. Եփրեմ վարդապետ՝ տեղւոյն Կոնսիստորիայի նախանդամ Տ. Արսէն վարդապետ Բագուի գործակալ, Տ. Տաճատ ա. քահանայ Մարաղեան՝ Շամախոյ Կոնսիստորիայի անդամ և Տ. Ընձակ վարդապետ Ախալքալաքի գործակալ։

Կորիւն Վարդապետ

ՀԱՑՈՑ ԿՈՆՍԻՍՏՕՐԻԱՅԻ 400,000 Ր. ՊԱՀԱՆՋԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԻՒՆԻՑ

(Կառավարչական Մենատի քաղաքացիական վճռաբեկ Դեպարտամենտի նիստը 1902 թուի մարտի 20-ին)

Երդուեալ հաւատարմատար Սօկրատ Մէլիք-Ադամեան, որպէս Վրաստանի և Իմէրէթի հայ-լուսաւորչական թեմի կոնսիստորիայի հաւատարմատար, գանգատ ներկայացրեց